

**ՍԱՉԼՈՒ ԽԱՆՈՒՄ ԿԱՍ ՍԱՌՍԱՆԱՄ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII /
Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)**

Ժամանակով ըլում ա, չի ըլում՝ մի թաքավոր մի քաղաքում: Էդ թաքավորը միտք ա անում, որ «Էս քաղաքի միջումը ես մի վարձք բան չի արի, էսքան հարստությունը ունեմ, ես պտիմ մի վարձք անի, որ հարուստ ու քյասիբ լիանան»:

Էրկու հագար փութ մեղր առավ, էրկու հագար էլ՝ կարագ, խառնեց իրուր: Էն քաղաքի վերի կռանը մի բանձր սար կար, էն եղն ու մեղրը տարավ էն սարի գլուխը, սաղ քաղաքին իմացրուց.— Էկե՛ք, որ ես պտիմ վեր թողա ըստիան, ինչքան կուզեք հվաքեցեք, տարեք: Չիմն էլ ամենքը մի աման, մի բան վի կալան ու գնացին: Դա էդ եղն ու մեղրը վեր էթող սարի գլխիցը, խալխը չիմ էլ հավաքեցին, կերան ու լիացան: Լիացան, սկսեցին ամենքը իրանց տները գնալը: Մի ախչիկ, ամանը ձեռին, լիզելով էթում էր. էդ քաղաքում մի պառավ կնիկ կար, գնաց էդ ախչիկը ըտրա տունը: Պառավը հարցրուց էդ ախչկանը, թե.— Էդ ի՞նչ ես լպստում:

Ասավ.— Գիտես ո՞չ, որ թաքավորը ես դայդի բան ա արե՞լ:

— Ախչի՛, օղորդ ես ասո՛ւմ:

— Բա՛, օղորդ եմ ասում:

— Ա՛յ որդի, էլ կա՞, թե չիմ տարան:

— Որ հավաքող ըլի, ըլի որ էլի ըլի:

Էդ պառավը մի աման վի կալավ, գնաց էդ սարի տակը, տեհավ չիմ տարել են, այնօյին, ըսդի-ընդի կա, սկսեց թոփ անիլը: Խալխը չիմ գնացել ին, թաքավորի տղեն դեռ ընդի էր:

Թաքավորի տղեն գնաց պրռավի ամանին քացի էրետ, դեն գցեց, թե.— Էստտա վախտ որդի՞ ես էդեդ, որ նոր էկել ես ֆող ես հըվաքում:

Պառավը դրան անըծեց.— Աստծանե կխնդրեմ,— ասավ,— որ մի հենց քամի անի, որ քեզ տանի Սաչլի խանըմի բերդը գցի:

Ասելու պես մի քամի վի կացավ, էդ տղին վի կալավ, տարավ մի հեռու աշխարհքում մի ծմակի միջում, մի բերդի միջում վեր էբեր:

Տղեն վի կացավ, մտիկ արավ, տեհավ, որ ես բերդին ո՛չ դուռն ունի, ո՛չ դուռ ըլելու տեղ:

— Տեր աստվա՛ծ,— ասավ,— ես ի՞նչ փորձություն էր՝ իմ գլուխը էկավ:

Էդ բերդի միջումը մի հայաթ կար, էդ տղեն միտք անելով վի կացավ էդ հայաթի չորս կուռը ման էկավ, տեհավ, ո՛չ դուռն ունի, ո՛չ փանճաբա: Վերև մտիկ արավ, տեհավ, որ էդ հայաթի գլխին մի զարմանելի ախչիկ կա: Ախչիկն էլ տղին տեհավ: Ախչկա աչքին էդ տղեն հենց դուր էկավ, սիրտը թոթռաց: Վերնուց ձեն ածավ, թե.— Անմեղ ման մի գալ, տան դուռը չես կարա գտնի. ըտի կա՛ց, ես ես ա դվեր եմ գալի:

Ախչիկը դվեր էկավ տղի կուշտը, ասավ.— Դուն ո՞վ ես, որ դուշն իրան թևովը, օձն իրան պորտովը մեր ահիցը կարալ չի, որ դեսը անց կենա: Դու քանի՞ գլխանի ես, որ էկել ես ըստի:

— Աստծանե հրաման էր, ես էկա ընկա ըստի:

— Ա՛յ տղա, ինձ կուզե՞ս, որ ես քեզ ըստիան ազատեմ:

— Խանո՛ւմ, աշխարքիս էրեսին քեզանից լավ ախչիկ պտիմ ուղի՞:

Ախչիկը տղին տարավ տուն, իրուր հետ հաց կերան, քեփ արին:

Բիզունը մթնեց, մերն էկավ բերդի դրսի կոնիցը ձեն ածավ.— Սաչլի խանո՛ւմ, արի մագերդ կախ արա, որ գամ:

— Կացի՛, — ասավ ախչիկը,— գալիս եմ:

Տղին վի կալավ մի առանձին տեղ պըհեց, գնաց մազերը կախ արավ, մազերիցը մերը բռնեց ու դուս էկավ բերդը:

Մերն էկավ տուն, ախչկանն ասավ.— Ախչի՛, էս ի՞նչ մարդի ֆոտ ա գալիս ըստիան:

Ախչիկն ասավ.— Նանի՛, մենք խո թագա չենք էկե էս տուն, քանի տարի ա մենք էս տանն ենք, ըստի իսան տեհա՞ծ էս: Քու ահիցը, իմ ախպորտանց ահիցը իսան կարա ձեր տան գլխովը անց կենա՞: Ո՛վ գիտի, որդի էս իսան կերե, հըմի առամնուցո ֆոտ ա գալի, հենց գիտես, թե ըստի մարդ կըլի:

— Հա՛, ախչի դրուստ, էրեկի կերել եմ:

Մի քիչ վախտից եդը են օխտն ախպերն էլ էկան, նհանք էլ մոր պես ասին, թե.— Նանի ջա՛ն, էս ի՞նչ մարդի ֆոտ էր, որ ըստիան էկավ:

— Ա՛յ որդի,— ասավ նանը,— էրեկ որ են մարդը կերանք՝ ընդուր ֆոտը կըլի:

Է՛, տղերքն էլ խափվեցին, ռավոտը վի կացան ու եդ գնացին՝ ախպերտինքն էլ, մերն էլ:

Ախչիկը գնաց տղին հանեց, էկան դրանք էդ օրն էլ իրուր հետ կերան ու քեփ արին ըտի: Էքսի օրը ախչիկն ասավ տղին.— Դուն տենո՞ւմ ես, որ իմ ախպերտինքն էլ են ուշապ, մերս էլ ա ուշապ, մի օր վրավուրդ կանեն, քեզ էլ կուտեն, ինձ էլ կուտեն: Լավն էն ա, որ վի կենանք ու ըստիանց գլուխներս առնենք կորչենք:

Ասավ տղեն.— Ո՞նց դուրս կըլենք էս բերդի միջից:

Ախչիկն ասավ, թե.— Ոնց որ իմ մազերը կախ եմ անում, իմ մերը ոնց բռնում ա ու իջնում, դուն էլ ընե բռնի ու իջի, էս ոնց որ ըլի՝ դուս կգամ:

Ախչիկը մազերը կախ արավ, տղեն բռնեց ու իջավ. ախչիկը թռավ, ինքը դուս էլավ:

Ախչիկը տղին ասավ.— Ա՛յ տղա, աստծով բերդիցը լավ պըրծանք, դե արի փախչենք, որ իմ մորիցն ու ախպորտանց տենունք ո՞նց պտինք պըծնուլ:

Սկսեցին դրանք փախչիլը. փախան, էն օրը գնացին, էն քշերն էլ գնացին: Ախչիկը ռավոտը ասավ.— Ա՛յ տղա, եդ մտիկ արա, տես խո օքմին չի գալի:

Տղեն եդ մտիկ արավ.— Ախչի՛,— ասավ,— մի կտոր ամպ ա գալի:

— Է՛ դ,— ասավ,— իմ մենձ ախպերն ա: Ի՞նչ անենք, որ պըծնունք:

Տղեն ասավ.— Դու գիտես,— ասավ,— ոնց որ գիտես՝ հնե արա՛: Ես որ մի բան էլ ա գիտեմ ոչ:

Ախչիկն ասավ.— Դե լավ, ուշապը օձիցը շատ կվախի, չունքի ուշապը որ կծում ա՝ յադու չունի, օձը յադու ունի, ընդուր մհար ուշապը օձիցը շատ կվախի: Ես կդառնամ մի աղբիւր, քեզ կշինեմ օձ: Դուն կմտնես աղբրի ակը. կգա իմ ախպերը, կտենու, որ մենք ենք, կկըռանա, որ էն ախպրիցը ջուր խմի, դուն ընդիան դըբա աչքը նի կգաս, նա շատ կվախի, կարալ չի, որ ջուր խմի:

Ախչիկը դառավ մի աղբիւր, տղին շինեց օձ. ուշապն էկավ, քանի ուզեց ջուր խմի, ախպրի ակնիցը էդ օձը վրա թռավ, թե դրա աչքը կծի, դա վախեց, եդ քաշվեց: Շատ չալիշ էկավ ջլիզ, օձը մոտ չէթող, որ դա ըտիան ջուր խմի: Ուշապի ջիգըրը էկավ, թքեց ու եդ գնաց:

Եդ ախչիկ էդառ, դրան էլ շինեց էն տղեն, ձեռ-ձեռի տվին, ըսկսեցին փախչիլը: Օր ու քշեր փախան:

Ռավոտը ախչիկն ասավ.— Եդ մտիկ արա, տես խո օքմին չի գալի՞:

Տղեն եդ մտիկ արավ, տեհավ, որ թոզ ու դուման ա գալի եղնուց:

— Պա՛հ, պա՛հ,— ասավ,— ախչի՛, էս ի՞նչ բան ա, ի՞նչ գալիս ա:

Ախչիկը հարցրուց թե.— Ի՞նչ ա գալի:

Թե.— Թոզ ու դուման ա գալի:

— Ա՛յ էդ իմ միջնեկ ախպերն ա. վայ թե դա մեդ փչացնի:

Տղեն ասավ.— Բա ի՞նչ անենք, որ դրանե պըծնունք մենք:

Ախչիկն ասավ.— Ա՛յ տղա, վախիլ մի, թե իմ ասածը կանես՝ դրանից էլ կպրծնունք:

Տղեն ասավ, թե.— Իլլաճս ի՛նչ, որ անենք ոչ:

Ախչիկն ասավ.— Ես մի բաղ կդառնամ, չորսի կուռը հենց հասար քաշած, որ իմ ախպերը կարենա ոչ նի մտնի: Միշումը շատ խիար, ձմերուկ կըլի: Քեզ էլ կշինեմ միշումը բաղմանչի, ես էլ կդառնամ հրենիկ էն եմիշը: Կգա իմ ախպերը, չալիշ կգա, որ էդ բաղիցը մի բան առնու: Թե՛ խափվեցիր ու տվիր, էնե մեզ կփչացնի:

Էդ ախչիկը դառավ մի բաղ, չորսի կուռը հասար քաշած, դրան շինեց մի բաղմանչի, էդիր միշումը, ինքն էլ դառավ մի եմիշ:

Ախպերն էկավ հասավ: Էկավ տեհավ, որ քիրը բաղ ա դառել, տղին բաղմանչի շինել, ինքը մի եմիշ դառե: Ձեն էրետ, թե.— Բաղմանչի, դուս արի հլա :

Դուս էկավ տղեն:

— Ա՛յ բաղմանչի,— ասավ,— աստծու խաթեր,— ասավ,— ծարավ մեռնում եմ, ըլիլ չի որ ըստիան յա մի խիար տաս, յա մի ձմերուկ:

Տղեն ասավ.— Չէ, կարալ չե՛մ, իմ բանը չի:

— Դե որ տալիս չես, էն պուճուր եմիշը տուր, ինչ որ իրան գինն ա՝ էրկու իրան գինն ա՛ռ:

Ասավ.— Կարալ չեմ, որ տամ:

Ասավ.— Իսի՞ չես տա:

Ասավ.— Սա թաքավորական բաղ ա, չվել թաքավորը իրավունք չտա, որ մեռնես էլ՝ մի գաղ չեմ տա:

Էդ ուշապի ջիգրը շատ էկավ, թքեց ու եդ դառավ:

Էն ախչիկը եդ դառավ էլ էն ախչիկը, էն բաղմանչուն շինեց էլ էն տղեն, ետ ձեռ-ձեռի տվին ու փախան: Օր ու քշեր փախան:

Ռավոտը էլեթ տղին ասավ.— Հըլա եդ մտիկ, տե՛ս խո օքմին չի գալի՞:

Տղեն եդ մտիկ արավ, ասավ.— Մի դուշ ա գալի:

— Պա՛,— ասավ,— ա՛յ տղա, ինչ իլլաճ ունես՝ տե՛ս, որ էդ իմ մերն ա: Դրանից դժար պտինք պրծնուլ:

Ասավ.— Ախչի՛, ինչ իլլաճ ունես, դու տես, դուն տենում ես, որ ես մի բան էլ ա գիտեմ ոչ:

— Դե որ գիտես ոչ՝ ինչ որ քեզ ասեմ՝ պետք ա անես:

Ասավ.— Գլխի՛ս վրա:

Ասավ.— Ես կդառնամ ծով, մի պրախոդ միջին կսարքեմ, քեզ կդընեմ պրախոդչի, ես էլ տապ կանեմ էն բոխի ծառի տակին: Իմ մերը կգա չալիշ կգա, որ պրախոդը մոտիկ քշես, որ բալի պրախոդին վեր ըլի: Դուն մոտ չթողուս, քշես ոչ պրախոդը մոտիկ գա: Նա կուզենա, որ ծովիցը ջուր խմի, ես լափու կըտամ՝ շատ հեռու տեղ կգցեմ: Եդ կըսկսի քեզ դանչանք անելը: «Կարալ չեմ,— ասա,— քեզ վեր ունիլ, ես թքավորական պրախոդ ա, իրավունք կա ոչ»:

Էտ ախչիկը ծոցից մի հալլի հանեց, վրա արավ, գցեց էդ դգի մեջը՝ դառավ մի մենձ ծով, միջին սարքեց մի պրախոդ, էդ տղին էդիր պրախոդի միջումը: Էն ծովի դրաղին մի բոխի ծառ կար, գնաց տակին տապ արավ: Մերն էկավ հասավ պրախոդչուն ասավ.— Էդ պրախոդը դեսը քշի, բըզարել եմ, ես էլ նստեմ, անց կենամ, ինչ որ քու հախն ա, մինն էրկուսով ա՛ռ:

— Չէ՛,— ասավ,— դեղի ջա՛ն, ըլիլ չի, սա թքավորական պրախոդ ա, իրավունք չկա:

Ուզեց, որ ծովիցը ջուր խմի՝ էդ ախչիկը հընենց լափու էրետ, էդ ջուրը դրան շատ հեռու քշեց, կարաց ոչ որ ջուր խմի, էդ պրախոդչուն սկսեց դանչանք անիլ, թե.— Ինձ էլ պրախոդն առ, աստծու սիրո խաթեր:

— Չէ՛,— ասավ,— դեղի ջա՛ն, կարալ չեմ, թքավորը որ իմանա, իմ գլուխը քու գլխիցը լավն ա, վախում եմ, որ գլուխս կտրի:

Ջիգրն էկավ, թքեց ու ըստիան եդ դառավ:

Էն ախչիկը եդ դառավ էլ էն ախչիկը, տղին էլ շինեց էն տղեն: Ձեռը բռնեց էդ տղի թե.— Փա՛ռք քեզ, սաստո՛ժ, որ պրծանք: Ա՛յ տղա, էլ վախիլ մի, հըմի դվորը որ կուգես, արխեին գնանք: Վիկացան ձեռ-ձեռի տվին ու ըդու էլան: Գնացին մի չթվորի ռաստ էկան: Տեհան չիմ սև հագած:

Տղեն ասավ.— Ախչի՛, հլա ըստի նստի, տենանք ի՞նչ բան ա սա:

Տղեն գնաց էդ չթվորի կուշտը, ասավ.— Էս ի՞նչ բան ա, որ ճիպոտդ էլ ա սև հագցրած, դուն էլ ես սև հագե, չութդ էլ ես սև հագցրե, եգնիքդ էլ ես սև հագցրե, հոտաղդ էլ. դա ի՞նչ բան ա:

Ասավ.— Մեր թաքավորին մի տղա ուներ, էս քանի տարի ա, որ ոտով-գլխով կորել ա. ընդուր ծերա էլ իրա ժողովրդին էլ, ինքն էլ չիմ սև ա հագցրել, որ. «Իմ տղին չվելա գտնեմ ոչ, ես էդ բանը վերջացնիլ չեմ»:

— Դուն թաքավորի տղին որ տենուս, կճնանչե՞ս:

— Ի՞նչ պտիմ ճնանչիլ, րեխա էր, որ ընդով կորավ, հըմի ահագին մարդ կըլի:

— Ես էն թքավորի տղեն եմ:

— Շիտակ էս ասո՞ւմ:

— Շիտակ եմ ասում, ես էն թաքավորի տղեն եմ. դու գնա թաքավորի անկաճը բռնի, քեզ խելի բան կբախշի:

Հոտաղն ուզաց, թե դրա դաքին վագ տա, մաճկալը քարով էրետ, սըպանեց, ինքը վագեց, գնաց թքավորի կուշտը: Թաքավորի տղեն մութած մնաց էդ սպանված հոտաղի կշտին, խալխն էկան, հասան: Որ ընկավ էդ դալմաղալի մեջը՝ ախչիկը մտիցն ընկավ: Թաքավորն ու մերն էլ էկան, տղին վի կալան, տարան իրանց օթախը: Ախչիկը մնաց էն ջրի դրաղին նստած մենակ: Ախչիկն ասավ.— Ա՛յ նամարդ, ես գիտեի, որ դու ինձ պըհիլ չպըտիս, վերջը բրախիլ պըտիս: Ախչիկն ասավ.— Լավն էն ա ես մի վարդի ծառ դառնամ ըստի, թե չէ ուրիշ մարդի ձեռ կընկնեմ:

Դա դառավ մի վարդի ծառ:

Մի պառավ կնիկ էկավ, ըտի տավար կար, էն տվարի թրիքը հըվաքելու, չորացնելու: Էդ պառավ կնիկը թրիքը հըվաքելով գնաց. տեհավ մի վարդի ծառ աղաքին:

— Չա՛ն,— ասավ,— Էս ինչ լավ բան ա, սրան քոքիցը կհանեմ, կըտանեմ՝ թքավորի տղեն որ էկել ա, թքավորին փեշքաշ կանեմ, ինձ բան կբախշի, կտանեմ կուտեմ, պառավ կնիկ եմ, կապրեմ:

Քոքիցը հանեց էդ վարդի ծառը, տարավ իրան տուն: Էդ պառավը օրը մի գրվանքա բամբակ ուրիշից բերեր, էրկու օրումը, իրեք օրումը մաներ, տաներ տեր տերը, նրա հախն առներ, բերեր՝ հացի տեր, բանի տեր, որ ապրեր:

Վարդի ծառը, որ էդեր տանը, դնաց մի գրվանքա բամբակ էլ էրեր տուն, ինքն իրան ասավ.— Սոված մեռնում եմ, գնամ հրևանի տուն, գամ, որ էս բամբակը մանեմ, որ տանեմ տիրոնչը տամ, փողն առնեմ, որ հացի տամ, ուտեմ:— Ասավ ու էթող, գնաց հրևանի տուն:

Էդ ախչիկը էդ բանը էդ պոավիցն իմացավ, պառավը դուս ըլելու հետ՝ մի սեաթ էդ բամբակը մանեց, թել շինեց ու ընդի կախ արավ: Վի կացավ օթախը ավլեց, խորակ շինեց, իրան փայը կերավ, պոավի փայը կրակի դաքին ծածկեց, ինքը էլեդ դառավ վարդի ծառ:

Պառավը մխելի վախտիցը եդը էկավ, տեհավ, որ տունն ավլած, թելը մանած, խորակը շինած, կրակի դրաղին ծածկած:

Պառավը շատ արմացավ. «Էս ի՞նչ թավուր բան ա, դուռը փակած, բլանին իմ ջերումը, նի են մտել ու էդ բանն արել»:

Թելը վի կալավ ու տարավ էրետ տիրոջը:

— Դեղի՛,— ասավ,— էս ի՞նչ կոկիլիկ մանած ես արել, կասես թե օձի բերնից դուս քաշած ըլի։
Համ ամեն հետ շատ եղի մանեիր, բերեիր, էս ի՞նչ չուստ մանեցիր։

— Ա՛յ որդի, ամեն հետ սոված էի, էսօրի կուշտ եմ էլել, ընդուր հրաքաթ արի չուստ մանեցի։

— Դեղի ջա՛ն, որ ըտենց ա, էրկու գրվանքա էլ տար, էլի ըսենց մանած արա, էս քեզ սոված պըհիլ չեմ։

Քաշեց ու էրկու գրվանքա բամբակ էրետ պռավին։ Տարավ էդիր տանը պառավը, ինքը վիկացավ, գնաց ջուրը, ջրումը շատ խալխ կար, պառավը խելի եղացավ։ Հլե չվելը պռավի գալը ախչիկը դուս էկավ, տունն ավլեց, բամբակը մանեց, թել շինեց ու ընդի կախ արավ։ Մի խորակ շինեց ինքը կերավ, պռավի փայն ընդի ծածկեց կրակի դրաղին։ Պառավը ջրիցը էկավ, տեհավ տունն ավլած, բամբակը մանած, խորակը էփած։ Պառավը շատ զարմացավ, կանգնեց դես մտիկ արավ, դեն մտիկ արավ, ասավ. «Էս վարդի ձառը խո էս անիլ չի»։

Մի օր պիեց էդ թելը, էքսը վի կալավ տարավ էրետ տերը։

Թելատերն ասավ.— Ապրե՛ս, դեղի՛, էս ընդրանից լավ ես մանել, շնորհակալ եմ։

Պառավն ասավ.— Իրեք գրվանքա բամբակ քաշի տուր։

Իրեք գրվանքա բամբակ քաշեց, էրետ իրան։

Պառավը տարավ տանը էդիր էտ բամբակը, դաստի իրան իրան ասավ. «Գնամ հըրևանի տունը, գամ»։ Պառավը դուս էլավ, վարդի ծառը էլեդ դառավ ախչիկ, բամբակը մանեց, թել շինեց ու ընդի կախ արավ։ Տունն ավլեց, խորակը շինեց, իրան փայը կերավ, պռավի փայը ծածկեց։ Գնաց էլեդ դառավ էն վարդի թուփը։

Պառավը տուն էկավ, տեհավ, որ շինած չիմ. վի կացավ պառավը, ասավ. «Հըլա էս գնամ հըրևանի տուն, տենամ էս ի՞նչ բան ա»։ Գնաց ու դռանը տապ արավ։ Տեհավ էլի վարդի թուփը ախչիկ դառավ, տունն ավլեց ու խորակը շինեց, իրան փայը կերավ, պռավինը ծածկեց, ուզեց, որ գնա վարդի թուփը դառնա, պառավը չուստ տուն ընկավ ու փեշիցը բռնեց։

— Ախչի՛,— ասավ.— դու որ ախչիկ ես, խի՞ ես ըտթավուր բաներն անում, որ իմ խելքը կորչում ա գլխիցս։

— Ի՞նչ անեմ, դեղի ջա՛ն, վախում եմ, թե ինձ պահես ոչ ու պահպանես։

— Ես որդի չունեմ, քեզ իմ գլխի ծերին կպահեմ։

— Դե որ կպահես, դեղի ջա՛ն, օրը իրեք գրվանքա բամբակ կբերես, շատ սիրուն կմանեմ, քեզ կտամ, կտանես տերը կտաս, փողը կառնես, մեր գլուխը կպահենք էտով։

Մի օր պառավը դուս էլավ քուչեն, տեհավ, որ թքավորը պառավ կնանիք ա հվաքում։ Տղեն նշնել ա, էդ պառավ կնանոց հվաքում ա, տանում ա, որ հրսանիքի շորը օխենն, որ ձենն։

Պառավը եդ էկավ իրանց տուն։ Ախչիկը հարցրուց թե.— Դեղի՛, էդ ի՞նչ շատ եղացար։

Պառավն ասավ.— Թաքավորն իրա տղին նշնել ա, պառավ կնանիք էր հվաքե, տաներ, որ շորը օխենն ու ձենն, էս էլ ռաստ էկա, ինձ էլ տարավ։

— Դեղի ջա՛ն,— ասավ,— հըմի հրսանիքի շորերը կարո՞ւմ են։

Թե.— Հա՛,— ասավ,— որդի՛, կարում են։

Ասավ.— Դեղի ջա՛ն, գնա թքավորին ասա, տղիդ նհալին տուր, տանեմ իմ ախչիկը կարի։

Պառավը գնաց թաքավորին ասավ.— Թաքավորն ապրած կենա, տղիդ նհալին տուր, տանեմ իմ ախչիկը կարի։

— Ախր դու ախչիկ չունես, ա՛յ պառավ, է՛,— ասավ թաքավորը։

Ասավ.— Ես մի ֆոքեորդի ախչիկ եմ ճարել ինձ հմար։

Թաքավորն ասավ.— Դեղի, ըժու քու ախչիկը էդքան շնորհք ունի՞։

— Թե լավ չի կարիլ,— ասավ պառավը,— իմ գլուխը քե հալալ։

Կլոյեց, էրետ պռավին: Վի կալավ էբեր տուն: Ախչիկը վի կալավ նհալին կարեց, մի քիչ տեղ անկարել էթող, կռացավ միջին ձեն ածավ.— «Ո՛վ Սառսանամ, Սառսանամ,— ըսենց էր նրա անունը,— Սառան նանիցն ընկած, օխտն ախպորից ընկած, դոնեդուռ ընկած Սառսանամ»: Ըսենց ձեն քցեց նհալի մեջը ու կարեց: Էրետ պռավին, պառավը տարավ էրետ թաքավորին: — Ո՛ւհ, դեղի՛, ըսենց հունարով ախչիկ ունես դո՛ւն:

Պառավն ասավ.— Որ ես ըտենց հունարով ախչիկ չունենամ, իմ գլուխը կտրիլ կտամ քե՛զ: Թաքավորը տղի հըրսանիքը նստացրուց:

Օխտն օր, օխտը քշեր հըրսանիք արավ տղին: Թաքավորեք արավ, ջոկ օթախի մեշ գձեց տղին ու հարսին: Տղեն գնաց խտոր ընկավ, ախչիկն էկավ նհալին վեր էլավ, որ շորերը հանի, նհալու միջիցը ձեն էրետ, թե. «Սառսանամ, Սառսանամ, Սառան նանիցն ընկած, օխտն ախպորիցն ընկած, դոնե-դուռ ընկած Սառսանամ»:

Էս ձենի վրա թագա հարսի սիրտը ճաքեց ու մեռավ: Տղի միտն ընկավ, որ Սառսանամին անտեր բրախել ա:

Գնաց թաքավորին կանչեց, ասավ.— Արի տես, ախչիկը հանկարծ մահացավ:

Թաքավորը էկավ տեհավ, որ ախչիկը՝ սիրտը ճաքել ա, մեռել:

Ասավ.— Դե՛, ա՛յ որդի, ես ի՛նչ անեմ, դու ի՛նչ անես, դրա ճկատի գրածն էլ ըտենց էր:

Մի քանի օրից եղը Սառսանամը ասավ պառավին.— Կարա՞ս որ մի գիր գրեմ, տանես թաքավորի տղի ձիու յալիցը կախ անես:

— Լա՛վ,— ասավ,— որդի՛, խի՞ չեմ կանա տանի:

Մի գիր գրեց, էրետ պռավին, տարավ, մի ուստութենով թաքավորի տղի ձիու յալիցը կախեց ու դուռ էկավ:

Թաքավորի տղեն էկավ, որ ձին թիմարի, մտիկ արավ, տեհավ, որ յալիցը մի գիր գրած ա թե.

«Թաքավորի տղա՛, ես քեզ ասի, թե որ ինձ իմ տեղիցը ժաժ մի տուր, դուն հու՛մ կաթնակեր ես, ինձ պըհիլ չես: Ես ֆլան պըռավի տանն եմ, յա՛ արի ինձ տար իմ տեղը, յա՛ թե չէ, արի ինձ ուզի. թե ուզես էլ, ես պառավի տանը պտի նշնվես ու ըստիան պտիս հրսանիք անի, տանի»:

Տղեն կարդաց, սիրտը տակն ու վրա էլավ, ասավ.— Թեկու՛զ թաքավորը վիզս կտրի, ես պտի երեսս պատռեմ, թաքավորին ասեմ, տր ինձ հմա կնիկ ուզի:

Մի քանի օրից եղը թաքավորին հացի վրա ասավ.— Թաքավո՛րն ապրած կենա, թե կու՛զես գլուխս էլ կտրես, քեզ մի բան պտեմ ասի:

— Ա՛յ որդի, ասա՛,— ասավ,— խի՞ կկտրեմ:

— Թաքավորն ապրած կենա,— ասավ,— մի քիչ իմ ասելու խոսք չի:

— Ի՞նչ որ ըլի, որդի՛, կատարիլ պտիմ, ասա՛,— ասավ:

— Թաքավո՛րն ապրած կենա, էդ մի ախչիկն հլա մահացավ, իրան ճակատի գիրն էր, բա ինձ հմար էլ կնիկ չպտես ուզի՛լ:

Թաքավորն ասավ.— Բա չպըտի ուզե՞մ, ուզել պըտեմ:

Տղեն ասավ.— Թաքավո՛րն ապրած կենա, թե ուզիլ պտիս, մի ախչկա տեղ շանց կտամ քեզ, թե կու՛զես՝ էն ա, թե ուզիլ չես՝ էլ աշխարքի էրեսին ես կնիկ չեմ ուզի:

— Ասա՛, որդի, էդ որդի՛ ա, ասա՛ կու՛զեմ:

Ասավ.— Թաքավորն ապրած կենա, էն ֆլան պըռավի տանը մի ախչիկ կա, պտիս ընդի նշնի ու ընդիան էլ հրսանիք անի, բերի:

— Ա՛յ որդի,— ասավ,— նա ի՞նչ թավուր ախչիկ ա, որ ես գնամ, էն պռավի տանիցը նըշնեմ, հրսանիք անեմ, բերեմ:

Ասավ.— Թաքավո՛րն ապրած կենա, թե շատ-քիչ իմ գլուխը կսիրես, կուզես առանձին, կուզես քու նազընով գնա, մի միանով պռավի դոնիցը անցի, տե՛ս, թե կհավանես՝ ընդի նշնի, ընդիան հրսանիք արա, բի, թե հվանիլ չես՝ բրախի կորչի:

Թաքավորը վի կացավ, իրան նազընուցը մինը վի կալավ, գնաց: Գնաց պռավի դուռը: Պռավի դոնիցը մտիկ արավ, տեհավ ախչկանը՝ ուշքը գնաց, ախչիկը տեղիցը կազնեց ու գլուխ էրետ: — Դեղի՛,— ասավ թաքավորը,— ախչիկը քունն ա՛:

Քրքրվեց պառավը, թե.— Իմն ա:

— Դե, արի,— ասավ,— նշան տամ իմ տղի համար:

Պռավի ձեռն ու ոտը իրար խառնվեց: Դեմ վազեց, նշանն առավ, էրետ ախչկանն:

— Դե,— ասավ,— դեղի՛, այ էգուց հրսանիքը բերիլ պտիմ քու դուռը: Ախչկանդ հարցրու տես դապո՞ւլ ա:

Ախչկանը հարցրուց, ասեց.— Ախչի՛, գապո՞ւլ ես, որ գան էգուց:

Ախչիկը գլխով էրետ:

Գնաց թաքավորը ուրախ-ուրախ տուն:

Ասավ.— Ապրի՛ աչքդ, տղա՛, էդ ախչիկը ե՞փ ես տեհել, որ հըվանել ես:

— Թաքավո՛րն ապրած կենա,— ասավ,— ես աչքով չեմ տեհել, երագով եմ տեհել:

Թքավորը սկսեց հրսանիքը նստացնիլը: Հրսանիքն էբեր պռավի դուռը:

Օխտն օր, օխտը քշեր հրսանիք արավ: Հասցրուց իրուր մուրազի, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

Աստծանե իրեք խնձոր վեր գա. մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ ալամ աշխարքին: